ԿՈՉ ԵՒ ԴԻՄՈՒՄ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԿԱՆԱՆՑ

Հայրենակցուհիներ,

Այս փոքրիկ դիմումով, Նիւ Եօրքաքնակ խումբ մը Հայուհիներս, Ձեզ կը դիմենք Միացեալ Նահանգներու և Քանատայի մէջ բնակող տարագիր Հայ Տիկիններ և Օրիորդներ, և յոյս ունինք որ դուք անկեղծ ուշադրութեամբ և բարութեամբ արձագանգ կըլլաք այս խօսքերուն։

Սահմանադրական ազատութենէն յետոյ, Մենք, Ամերիկաբնակ Հայուհիներս, խանդավառուելով հանդերձ մեր Հայրենիքի ազատութեամբ, նոր և լուրջ ձեռնարկ մը չըրինք ծառայելու թէ մեր ժողովուրդին և թէ յատկապէս բարձրացմանը Հայ Կնոջ Հասարակական գործերու մէջ։ Շարունակուեցաւ աննշան բացառութեամբ, նախկին եղանակը գործելու — նոյն Որբանոցները, նոյն Ազգատախնամները, նոյն Նպաստամատոյցները բաժան բաժան, ամեն մի քաղաք իր համար, առանց ընդհանուր կապի։ Կարծէք հիմա՛լ, ուրիշ բան չկայ բայց եթէ շարունակել հին վէրքերու խնամքը հին ձևով և եղանակով։

Ժամանակ է, կը կարծենք, եղած Ընկերութիւններուն օգտակարութիւնը ճանաչելով հանդերձ, նոր շարժում մը մտցնել այս մեծ Գաղութի իգական սեռի մէջ, որը ապրելով ազատ երկրի լուսաշոյն պայմաններու տակ, անխուսափելի պարտականութիւն մը ունի հոգալ հայրենի երկրի ծոցը՝ ազգութեան մէջ ընկղմած Հայ Կնոջ բարձրացումի մասին, ջանալով ուղարկել այնտեղ Ամերիկեան եղանակով պատրաստուած վարժուհիներ, Ամերիկեան գրականութենէն թարգմանուած դրքոյկներ տալ Հայ Կնոջ, ընթերցանութեան համար. ձգտիլ ծանօթացնել Ամերիկացիներու կացութիւնն ու գործունէութիւնը Երկրի Հայուհիներուն, փոխադարձաբար. այդ բոլորին հետ միասին ներշնչել Գաղութներու Հայուհիներուն, իրենց պարտաւորութիւններուն այս նոր և լրջամիտ գիտակցութիւնը։

Ընելիք շատ կայ և պահանջն ալ շատ մեծ է. այդ բոլորին համար հարկաւոր է ամենէն առաջ յարաբերութեան մէջ դնել այլ և այլ քաղաքներու Հայուհիները, կապ հաստատելով անոնց մէջ, առաջ բերել մտքի և կարծիքներու փոխանակութիւն, պատրաստուածներուն ասպարէզ և դիւրութիւն տալ. որպէսզի ոմանք իբրև խօսող, ոմանք իբրև կաղմակերպող, մոռնեն հանրային աշխատանքի մէջ և այդպէսով դուրս բերեն չեզոքացումէ այն հարիւրաւոր Հայ Կիները, որոնք թէև Ամերիկայ կապերն բայց զուրկ են Ընկերականութենէ, հանրային գործէ և ինքնազարգացումէ։

digitised by A.R.A.R.@